«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«31» մարտի 2021 թ. N 16 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետի «բ» ենթակետը, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի 1–ին մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդված 1–ին մասը և«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.18 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության որակավորման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի (այսուհետ՝ Հանրային վերահսկողության խորհուրդ) հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների Պալատ»
հասարակական կազմակերպության
խորհրդի
2021թ. մարտի 31 N 16-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ 3
2. Որակավորմ ան հանձնաժողովի գործառույթները 3
3. Որակավորման հանձնաժողովի կազմավորման կարգը 4
4. Որակավորման հանձնաժողովի նիստերը 5
5. Որակավորման հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները 6
6. Որակավորման հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները 6
7. Որակավորմանի անձնաժողովի ծրագիրը և հաշվետվականությունը 7
8. Որակավորման հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը 7

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կանոնադրությունը մշակվել է ի կատարումն «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետի «բ» ենթակետի, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի 1–ին մասի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդված 1–ին մասի և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.18 կետիպահանջների:

1.2 Սույնկանոնադրությամբ սահմանվում են Պալատի որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ Որակավորման հանձնաժողով) կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ձևավորման ու գործունեության կարգը:

1.3 Որակավորման հանձնաժողովը Պալատի մշտական հիմունքներով գործող հատուկ մարմին է:

1.4 Որակավորման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներով, Պալատի կանոնադրությամբ, Պալատի՝ աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման տրման կարգով,սույն կանոնադրությամբ և Պալատի համապատասխան այլ ներքին իրավական ակտերով:

1.5 Որակավորման հանձնաժողովի լրիվ անվանումն է՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Որակավորման հանձնաժողով», կրճատ անվանումը՝ «ՀԱՊ Որակավորման հանձնաժողով»:

1.6 Որակավորման հանձնաժողովը հաշվետու է Պալատի խորհրդին: Որակավորման հանձնաժողովը կարող է ունենալ ենթահանձնաժողովներ, իր անվանումով հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

1.7 Որակավորման հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով:

2. Որակավորման հանձնաժողովի գործառույթները

2.1 Որակավորման հանձնաժողովի գործառույթներն են.

1) մշակել աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման գործընթացի հետ կապված ներքին իրավական ակտերի նախագծերը և հետագայում դրանք արդիականացնել,

2) կազմակերպել որակավորման գործընթացը,

3) անցկացնել աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման քննությունները՝ որակավորման քննությունների նկատմամբ վերահսկողությունիրականացնելու միջոցով,

4) գնահատել աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու համար դիմորդիաշխատանքային փորձիբնույթը և կառուցվածքը՝ ներկայացվող պահանջներին համապատասխանությանտեսանկյունից,

5) որոշում կայացնել աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների որոշակի առարկաներից ազատման վերաբերյալ,

6) Պալատի խորհրդին ներկայացնել առաջարկություններ՝ դիմորդին աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում տալու կամ որակավորում չտալու վերաբերյալ,

7) իրականացնել աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման հետ կապված Պալատի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

2.2 Բացի 2.1 կետում նշված գործառույթներից Որակավորման հանձնաժողովը կարող է իրականացնել նաև հետևյալ գործառույթները.

1) Պալատի խորհրդին առաջարկելՊալատի կողմից անցկացվող դասընթացների և սեմինարների տարեկան ծրագիր՝ որպես շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումներ,

2) ուսումնասիրել կազմակերպությունների կողմից անցկացվող մասնագիտական դասընթացները և սեմինարները ու Պալատի խորհրդին առաջարկել այդ դասընթացները և սեմինարները ճանաչել որպես շարունակական մասնագիտական զարգացման միջոցառում,

3) որակի հսկողության միջոցով ապահովել Պալատի կողմից կազմակերպվող դասընթացների և սեմինարների պատշաճ մակարդակը,

4) վերլուծել, գնահատել և առաջարկություններ ներկայացնել ներդաշնակեցնելու Պալատի համար հետաքրքրություն ներկայացնող մասնագիտական դասընթացներ առաջարկող ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերը, դասընթացների բովանդակությունն ու քննական ստանդարտները, ինչպես նաև դրանց համապատասխանությունը ներկա և առաջիկա պահանջներին,

5) համագործակցել հաշվապահական կրթական ծրագրեր և վերապատրաստման դասընթացներ առաջարկող կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով ներդաշնակեցնել դասընթացները և մասնագիտական կրթական ծրագրերը,

6) գործնական կապեր հաստատել և համագործակցել արտերկրի համապատասխան հանձնաժողովների, կրթական և որակավորման իրավասություններ իրականացնող մարմինների հետ:

3. Որակավորման հանձնաժողովի կազմավորման կարգը

3.1 Որակավորման հանձնաժողովի անդամ կարող են լինել Պալատի անդամ աուդիտորները և փորձագետ հաշվապահները:

3.1.1. Որակավորման հանձնաժողովը ձևավորվում է Պալատի խորհրդի յուրաքանչյուր ընտրման պահից եռամսյա ժամկետում: Որակավորման հանձնաժողովի նախորդ

կազմի լիազորությունները շարունակում են գործել մինչև Որակավորման հանձնաժողովի նոր կազմի ձևավորման պահը: ***(լրացում 30.06.2025 N 22-L)***

3.2 Որակավորման հանձնաժողովը բաղկացած է 9 անդամից, որոնցից առնվազն 4–ը պետք է լինեն աուդիտորներ:

3.3 Որակավորման հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ որակավորման հանձնաժողովի նախագահը նշանակվում են Պալատի խորհրդի կողմից: ***(փոփոխություն 30.06.2025 N 22-L)***

3.4 Պալատի խորհրդի կողմից նախապես նշանակվում է Որակավորման հանձնաժողովի նախագահը:

3.5 Պալատի աշխատակազմըէլեկտրոնային փոստի և (կամ) Պալատի պաշտոնական կայքի միջոցով հայտարարություն է տարածում Որակավորման հանձնաժողովի անդամների ներգրավման վերաբերյալ:

3.6 Որակավորման հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել հաշվապահական հաշվառման կամ աուդիտորական գործունեության հետ կապվածառնվազն յոթ տարվա աշխատանքային փորձ ունեցող անձինք:

3.7 Որակավորման հանձնաժողովի նախագահը ուսումնասիրում է որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվել ցանկացող թեկնածուների ցանկը և ընտրում անհրաժեշտ թվաքանակով անդամներին: Որակավորման հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ Պալատի խորհուրդը նշանակում է Որակավորման հանձնաժողովի անդամներին: Խորհուրդը, Հանձնաժողովի անդամներ ընտրելիս, հաշվի է առնում մասնագիտական կրթության և որակավորման բնագավառում ունեցած փորձառությունն ու գիտելիքները:

3.8 Այն դեպքում, երբ Որակավորման հանձնաժողովի որևէ անդամի պաշտոնավարումը վաղաժամկետ դադարում է, ապա սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվում է Որակավորման հանձնաժողովի նոր անդամ՝ նախորդ անդամի համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: ***(փոփոխություն 30.06.2025 N 22-L)***

4. Որակավորման հանձնաժողովի նիստերը

4.1 Որակավորման հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստեր գումարելու միջոցով:

4.2 Որակավորման հանձնաժողովի նիստը հրավիրվում է Որակավորման հանձնաժողովի նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ: Նիստերի արդյունքներն արձանագրվում են: Նիստերը նախագահում է որակավորման հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում նիստին ներկա անդամներից տարիքով ավագը:

4.3 Որակավորման հանձնաժողովում քվորումը առկա է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Որակավորման հանձնաժողովը որոշումները ընդունում է հանձնաժողովի նիստիններկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բայց ոչ պակաս, քան չորս կողմ ձայնով: Ձայների հավասարության դեպքում Որակավորման հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

5. Որակավորման հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները

5.1 Որակավորման հանձնաժողովի անդամները իրավունք ունեն.

1) մասնակցել Որակավորման հանձնաժողովի նիստերում ընդունվող որոշումների քվեարկությանը.

2) ներկայացնել հարցեր Որակավորման հանձնաժողովի նիստերում քննարկելու համար.

3) արտահայտել տեսակետ Որակավորման հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ.

4) Որակավորման հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ ստանալ տեղեկատվություն Պալատի այլ մարմիններից և աշխատակիցներից:

5.2 Որակավորման հանձնաժողովի անդամները պարտավոր են մասնակցել Որակավորման հանձնաժողովի նիստերին: Եթե Որակավորման հանձնաժողովի անդամը որևէ պատճառով չի կարող ներկա գտնվել նիստին, պետք է այդ մասին տեղեկացնի Որակավորման հանձնաժողովի նախագահին:

5.3 Որակավորման հանձնաժողովի անդամները իրավասու չեն իրենց լիազորությունները փոխանցել այլ անձանց:

5.4 Եթե Որակավորման հանձնաժողովի անդամը անհարգելի պատճառներով բացակայում է անընդմեջ երեքից ավելի նիստերից կամ տարվա ընթացքում անցկացված նիստերի ընդհանուր թվի ավելի քան կեսից, ապա Որակավորման հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ կարող է որոշում ընդունել դիմել Պալատի խորհրդին՝ տվյալ անդամի լիազորությունները դադարեցնելու և փոխարենը նոր անդամ ընտրելու հարցով:

6. Որակավորման հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները

6.1 Որակավորման հանձնաժողովի գործունեությունը կազմակերպում է Որակավորման հանձնաժողովի նախագահը:

6.2 Որակավորման հանձնաժողովի նախագահը.

1) կազմակերպում և ղեկավարում է Որակավորման հանձնաժողովի ընթացիկ աշխատանքը.

2) ապահովում է Որակավորման հանձնաժողովի առջև դրված խնդիրների կատարումը.

3) բաշխում է պարտականությունները Որակավորման հանձնաժողովի անդամների միջև և նրանց տալիս է հանձնարարականներ.

4) որոշում է Որակավորման հանձնաժողովի նիստի օրակարգը, անցկացման ամսաթիվը, ժամանակը և վայրը.

5) հրավիրում և անցկացնում է Որակավորման հանձնաժողովի նիստերը և նախագահում է դրանք.

6) ապահովում է նիստերի արձանագրությունների վարումը և պահպանումը.

7) Պալատի խորհրդին ներկայացնում է հաշվետվություն Որակավորման հանձնաժողովի տարեկան գործունեության վերաբերյալ.

8) որոշումներ է կայացնում փորձագետ ներգրավելու վերաբերյալ՝ ըստ անհրաժեշտության:

7. Որակավորման հանձնաժողովի ծրագիրը և հաշվետվականությունը

7.1 Որակավորման հանձնաժողովը կազմում է իր գործունեության տարեկան ծրագիրը, որը ներկայացնում է Պալատի խորհրդին՝ հաստատման՝ ոչ ուշ, քան տվյալ տարվա նախորդող նոյեմբերի 15-ը, իսկ նոր կազմավորված հանձնաժողովը՝ կազմավորումից հետո երկամսյա ժամկետում:

7.2 Որակավորման հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը Պալատի խորհրդին է ներկայացնում նախորդ տարվա իր գործունեության մասին հաշվետվությունը:

8. Որակավորման հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը

8.1 Որակավորման հանձնաժողովին նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսական միջոցների հատկացումը կատարվում է Պալատի խորհրդի որոշումներով՝ Որակավորման Հանձնաժողովի կողմից կազմված և Պալատի խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի և նախահաշիվների համաձայն: